

Սասուն Սուրենի Մխիթարյան

Ծնվել է 12.05.1978թ.-ին, Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

1999թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը:

1999-2001թթ. ծառայել է ԼՂՀ զինված ուժերում, հանդիսացել է դասակի հրամանատար, սերժանտ, զորամասի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալի օգնական:

23.04.2002-12.05.2003թթ. աշխատել է Տավուշի մարզի դատախազությունում՝ որպես ստաժոր-քննիչ:

12.05.2003-22.06.2005թթ. աշխատել է Տավուշի մարզի դատախազությունում՝ որպես քննիչ:

22.06.2005-07.09.2012թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզային քննչական վարչությունում՝ որպես քննիչ, ապա ավագ քննիչ:

Ունի ոստիկանության մայորի կոչում:

2012 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ:

2012 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

20.10.2021 թվականի ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

09.01.2023 թվականից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում, Սասուն Մխիթարյանը ձեռք է բերել ռեզերվային դատավորի կարգավիճակ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Արմեն Էդուարդի Պողոսյան

Ծնվել է 24.01.1989թ.-ին, Վրաստանի Թբիլիսի քաղաքում:
2011թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով իրվագիտության բակալավրի աստիճան:
2011-2013թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում:
2014թ. ավարտել է ՀՀ արդարադատության ակադեմիայի դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը:
23.02.2015-20.10.2021թթ. աշխատել է է ՀՀ դատախազության համակարգում, զբաղեցրել է Լոռու մարզի դատախազության դատախազի պաշտոնը:
ՀՀ գլխավոր դատախազի 2015 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 220-Ա հրամանով պարգևատրվել է շնորհակալագրով:
ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 274-Ա հրամանով պարգևատրվել է «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով:
ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 416-Ա հրամանով պարգևտրվել է «ՀՀ դատախազության 100-ամյակ հոբելյանական մեդալով:
ՀՀ գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 30-ի թիվ 185-Ա հրամանով րտահերթ շնորհվել է արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀՀ գլխավոր դատախազի 2021 թվականի հունիսի 25-ի թիվ 202-Ա հրամանով պարգևատրվել է ՀՀ դատախազության կրծքանշանով և շնորհակալագրով:
ՀՀ Նախագահի 20.10.2021թ. հրամանագրով Արմեն Պողոսյանը նշանակվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:
09.01.2023 թվականից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում, Սասուն Մխիթարյանը ձեռք է բերել ռեզերվային դատավորի կարգավիճակ:
Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Արտավազդ Նորայրի Կարապետյան

Ծնվել է 1994 թվականի հոկտեմբերի 27-ին, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում:

2012 թվականին ավարտել է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը:

2012-2014թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2018 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2020 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

12.06.2018 թվականի առ այսօր աշխատում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր: